ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը
   Լուսինե Այվազյան
   ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության պետական բյուջեի հաշվառման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.
   ք.Տիրանա, Ալբանիայի Հանրապետություն
   2024թ. նոյեմբերի 4-ից 8-ը

3. Հրավիրող կողմը.
   Համաշխարհային բանկ, PEMPAL ծրագրի քարտուղարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
   PEMPAL գանձապետական համագործակցության «Կանխիկ միջոցների կառավարման և կանխատեսման ոլորտում գանձապետարանի կատարողականի ամրապնդում և չափում/Strengthening and Measuring Treasury Performance in Cash Management and Forecasting» խորագրով թեմատիկ նիստին մասնակցելու նպատակով

5. Քննարկված թեմաները
   - Ալբանիայի 2023-2030 թվականների հանրային ֆինանսների կառավարման ոլորտային ռազմավարությունը
   - Կանխիկ հոսքերի կառավարումը Ալբանիայի Հանրապետությունում
   - Գանձապետական միասնական հաշիվը
   - Գանձապետարանի կատարողականի գնահատումը
   - Կանխատեսումները և արհեստական բանականության կիրառումը

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.
   Մասնակցում էին PEMPAL ծրագրի մասնակից երկրների, ինչպես նաև Համաշխարհային բանկի ընդհանուր թվով՝ 75 ներկայացուցիչներ:

   Քննարկված հարցերի շրջանակը հիմնականում առնչվում էր կանխիկ հոսքերի կառավարմանը, գանձապետական միասնական հաշվին, գանձապետարանի հաճախորդներին և գանձապետարանի աշխատանքի կատարողականի գնահատմանը:

Ելույթ ունեցան Համաշխարհային բանկի փորձագետ Մարկ Սիլինսը և Մայք Վիլյամսը, ինչպես նաև ելույթներով հանդես եկան PEMPAL ծրագրի մասնակից երկրների ներկայացուցիչները:

Յուրաքանչյուր թեմայի ներկայացումից հետո հարցեր տալու հնարավորություն էր ընձեռվում և արդյունքում կազմակերպվում էին կարճ քննարկումներ:

Միջոցառման 2-րդ օրվա ընթացքում կազմակերպվել են նաև փոքր խմբերով քննարկումներ՝ յուրաքանչյուր մասնակից երկրի կողմից ներկայացնելով գանձապետական միասնական հաշվի առաձնահատկությունները, գանձապետարանի կատարողականի գնահատման առկա մեթոդները:

Նշված օրերին իմ կողմից ներկայացվել է Հայաստանում վարվող գանձապետական միասնական հաշիվը, հաշվի շրջանակների ընդլայնման պատմական ակնարկը, հաշվի ներքո ընդգրկված միջոցները և դրանց օգտագործման հնարավորությունները ու սահմանափակումները: Ներկայացվել է նաև գանձապետարանի դերն ու մասնակցությունը կանխիկ հոսքերի կառավարման, ինչպես նաև կանխատեսումների գործընթացներում:

Նույն քննարկման ընթացքում ներկայացրել եմ PEMPAL ծրագրի քարտուղարության կողմից նախօրոք տրված առաջադրանքի շրջանակում նշված 3 ցուցանիշներին համապատասխան իմ կողմից հաշվարկված՝ Հայաստանի գանձապետարանի կատարողականը:

Ներկայացնելուց հետո պատասխանել եմ մասնակիցների հարցերին:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համեմատվել են մասնակից երկրներում կանխիկ հոսքերի կառավարման և գանձապետարանի կատարողականի գնահատման առաձնահատկությունները:

Մասնակիցները հետաքրքրված էին Հայաստանի գանձապետարանի հաճախորդների լայն շրջանակով, ինչպես նաև գանձապետական միասնական հաշվի ներքո վարվող ենթահաշիվների ազատ մնացորդները օգտագործելու հնարավորության հանգամանքով:

PEMPAL ծրագրի՝ հաջորդ տարիների աշխատանքները կազմակերպելու, հիմնական միտումներն ու հետաքրքրությունները պարզելու նպատակով՝ միջոցառման վերջին օրվա ընթացքում մասնակիցները ներկայացրել են իրենց առաջարկները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել վերոնշյալ առաջարկներին համապատասխան ծրագրել հաջորդ տարիների թեմատիկ քննարկումները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նախորդ կետում նշված՝ PEMPAL ծրագրի շրջանակում հետագայում ուսումնասիրելու նպատակով, իմ կողմից առանձնացվել են.

- Վրաստանի գանձապետարանի կողմից թեստային եղանակով ներդրվող՝ կանխատեսումների գործընթացներում արհեստական բանականության կիրառման մեխանիզմը,
- Ուզբեկստանի գանձապետարանի կողմից, որպես նորամուծություն, պետական ծառայողների աշխատավարձերի վճարումների համար գանձապետական պլաստիկ քարտերի թողարկումը՝ 4 խոշոր բանկերի հետ համագործակցությամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

11.11.2024թ.